**Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Տեխնոլոգիա» /4 դասաժամ/ առարկայի ուսուցչի թափուր տեղի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել `
-դիմում /Ձև 1/, մեկ լուսանկար 3/4 չափի
-բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ /դիպլոմ/
-անձը հաստատող փաստաթուղթ,
-<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/:
-ինքնակենսագրություն/Ձև 5/
-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ
-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր/ առկայության դեպքում/
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնաակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի սեպտեմբերի 12-ից մինչև սեպտեմբերի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը,բացի շաբաթ ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 26-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Արմավիրի մարզի Արագածի Մ.Մեխակյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ.Արագած 5փ. 12 շենք: Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 271125 հեռախոսահամարով: